Գ. ՏԱՐԻ ԹԻՒ 855 ՇԱԲԱԹ 8 ՆՈՅԵՄԲԵՐ 1886 (Ն. Տ.) 20 ՆՈՅԵՄԲԵՐ 1886 22 ՍԼՖԷՐ 1304

40 ՓԱՐԱ.

ԱՌԵՒԼՔ ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐՇԱԿՈՒՆՔ ՕՐԱԳԻՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-Խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան գահեկան արժողի	200
» » Վեցամսեայ » »	100
» » Եռամսեայ » »	50
Դուռաւոր » եւ տեղական թղթատարով տարեկան » »	240
Դուռաւոր համար եւ տեղական թղթատարով վեցամսեայ » »	120
Օտար երկիրներ, տարեկան ֆրանկ	56
» » վեցամսեայ »	28

Դրամով դրկուած յրագրաց ճանրու ծախքը հնօրէնութեան վրայ է թղթատարութեան դրկուած նամակ կամ գրութիւն եւ չտարուիր

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 1886

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՆՈՐԴՈՒՄՆԵՐ

Կարող ենք վերջապէս ըսել թէ ինչ ինչ անհրաժեշտ բարենորոգմանց ճամբուն մէջ քայլեր առնուելու վրայ են։ Դիտեն մեր ընթերցողք թէ ազգային բարենորոգմանց մեծագոյնը մեզ համար՝ կրթական Բարենորոգումն է, որ չի բաղկանար միակ տնօրինութենէ մը, այլ պարտի լինել բովանդակութիւնն, ամբողջութիւնն կրթական ընդհանուր վերակազմութեան մը, ինչպէս և մասնակի բարւոքմանց։

Եւ մեք այսօր զոհոմեռեամբ պիտի նշանակենք Վարչական չնչոր մը կրթական թէ՛ ընդհանուր վերակազմութեան մը և թէ՛ մասնակի բարւոքմանց ճամբուն մէջ։

Տարիներէ հետէ ողբալի յետադիմութիւններ կրելէ և շատ մը հետաքրքրաշարժ արկածներ անցուցնելէ յետոյ, Դպրոցական Հրահանգ մը, ժամանակիս պիտոյից և փորձառութեան դասերուն համեմատ յօրինուած, վերջապէս վաւերացաւ Ազգ. Կեդր. Վարչութենէն, և գործադրումն հրամայուեցաւ։ Այս Հրահանգ, որ օրինական պարտաւորիչ ոյժ ունի ազգային հանրական դրամով պահպանուող վարժարանաց համար, դեռ չէ յանձնուած ի հրատարակութիւն, թէեւ ի մօտոյ լոյս պիտի տեսնէ։ Բայց եթէ առայժմ չենք մտներ անոր մանրամասնութեանց մէջ, կրնանք գէթ նշանակել անոր հիմնական սկզբունքներն։

Ազգ. Կեդր. Վարչութեան Ուսումնական Խորհուրդն իշխանութիւնն աւելցնել թաղային վարժարանաց վրայ, հաստատել այս վարժարանաց մէջ ուսմանց և մեթոտի միօրինակութիւն, բառնալ ամէն թաղային վարժարանի մէջ ամէն տեսակ առարկաներ դաստալու շռայլութիւնն ու ժամավաճառութիւնն, և ասոր համար հաստատել թաղային վարժարանաց միջեւ դասակարգութիւն մը, և զայս ամենայն իրագործել իր անմիջական հսկողութեամբ Կրթական Ձեռնհաս Տեսչի մը և ի հարկին մէկ երկու օգնականի համար։ Կրթական Տեսուչը թաղէ թաղ և գիւղէ գիւղ շրջելով, թաղական Խորհրդոց և ընդհանրապէս թաղեցւոց աջակցութեամբ մի առ մի պիտի վերակազմէ ամէն դպրոց ըստ Հրահանգին հիմանց։ Վերակազմութեան աշխատութիւնն ուսարտէլէ յետոյ, անընդհատ այցելութեամբք ու քննութեամբք պիտի հսկէ հաստատեալ բարենորոգման անթերի գործադրման և արդիւնաւորման։

Բայց կրթական լաւագոյն ծրագրերն իսկ դատապարտուած են յամրութիւն, եթէ չգտնեն աշակցութիւն ուսուցչական ձեռնհաս մարմնէ մը։ Կարելի է անուանել Կրթական Տեսուչ մը որ իւր պաշտման պահանջած արժանիքն ունենայ. բայց կարելի է գրչի հարուածով մը ստեղծել ամբողջ դաս մը փորձ և հմտաւ ուսուցչաց։ —Խնդրոյն այս կարեւորագոյն կէտն ալ չէ վրիպած Ազգ. Վարչութեան ուշադրութենէն։ Մանկավարժ Պ. Դաւիթ Դալաթեանցն պիտի յանձնուի հրապարակային դասախօսութիւններ ընել մանկավարժութեան և անոր յարակից դիտութեանց վրայ, այսու միջոց ընձեռելով մայրաքաղաքիս հայ վարժարանաց և դաստատուաց խմբին ուսուցչական արուեստին վրայ գիտական ծանօթութիւններ տանալու։ Վկայեալ մանագէտի մը գործածումն իսկ մեր մէջ պիտի լինի գնահատելի բարենորոգումն։ Այժմէն քանի մը տարի առաջ ելեր էր մեր մէջ պիտի լինի ամէն թաղի, ամէն գիւղի մէջ։ Թաղի մը մէջ նախակրթարանին երրորդ տարին թողուլ պարտաւորուած աշակերտը գիւղի մը մէջ նոյն երրորդ տարւոյ ընթացքը կարող պիտի լինի շարունակել առանց դժուարութեան։ Ուսուցիչ մը ի՛նչ բան ի՛նչ դասագրքով ու ի՛նչ մեթոտով որ դաս տայ թաղի մը նախակրթարանին չորրորդ տարւոյ աշակերտաց, նոյն բանը նոյն ձեւով ու նոյն մեթոտով դաս պիտի տայ ուրիշ թաղի մը դպրոցին նոյն տարւոյ աշակերտաց։

Այս կարեւոր բարենորոգման դիտելի մէկ հանգամանքն է որ ոչ մէկ թաղի վրայ դրամական նոր բեռ մը կը դնէ։ Այն թաղերը որք արդէն չունին վեց տարւոյ դասընթացին համապատասխան դպրոց մը, դարձեալ չպիտի ունենան զայն։ Ընդհակառակն, այն թաղերը որք ընդունած են ուսմանց յայտագիր մը զոր գոհացուցիչ եղանակաւ իրագործել անկարող են, կա՛մ չորս և կա՛մ վեց տարւոյ նախակրթարանի ընթացքով չատանալ պիտի հարկադրուին։ Քիչ բան դաս տալ, բայց լաւ սովրեցնել։ և չկարծել թէ տղայ մը իւր թաղին մէջ իսկ կրնայ սովրիլ ամէն ինչ որ հարկաւոր է իրեն, — ասոնք են Հրահանգին սկզբունքները։

Մայրաքաղաքիս թաղային դպրոցներուն միօրինակութիւնն ու դասակարգութիւնն անչուշտ առանց ծախուց ձեռք չպիտի բերուին։ բայց հարկ եղած ծախքը Պաղտիրբարանը կ'ըստանձնէ, Եւմուտոյլին մէջ դնելով բաւական գումար մը Կրթական

ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆ
ՌՈՒՍ ԼՐԱԳՐԱՊԵՏԱՑ

Նէվոյէ ՎրէՖՖ իւր վերջին թիւերէն միոյն մէջ, խմբագրական յօդուածով մը, խիստ սաստիկ յարձակում կ'ընէ ռուս կառավարութեան դէմ լրագրական օրինաց պատճառաւ։ Լրագրական այդ օրէնքները, կը գրէ Նէվոյէ ՎրէՖՖ, կամաց կամաց դէպի բանտ պիտի առաջնորդեն Բեղերապուրգի բոլոր լրագրաց խմբագիրները, պրոֆէսոր արդէն այժմ բանտարկութեան դատապարտուած են Նէվոյէ ՎրէՖՖն, Նէվոյէին, Պոթերբուրգսկայա Գազետայի և Ժիվպիսնոյէ Անքաղբէնէի խմբագիրները։ Սոքա ամենքն բանտարկութեան դատապարտուած են այն պատճառաւ որ պրեսայ խիստ և նեղասական յօդուածներ գրած են զանազան անձանց յուսի գործունէութեան նկատմամբ յիշելով նոցա անունն։

Նէվոյէ ՎրէՖՖ ասկէ հինգ տարի առաջ Վիէննայէն հրատարակեց յօդուած մը որ կը նկարագրէր թէ ինչպէս Բերգ անուն հրեայ մը անխնայ կը կողոպտէր Ռուսիայէն Վիէննա գնացող անձերն, որոց Բերգ առաջնորդութիւն կ'ընէր քաղաքին մէջ։ Այդ յօդուածն բոլորովին վայր ձգեց Բերգի պատիւն ու փարին և այնուհետեւ ոչ ոք կ'ընդունէր նորա առաջնորդութիւնը։ Բերգ տեսնելով իրեն հասած այս անիսխարինելի հարուածն, իւր անձնական շահերու դատրումը, ուզեցաւ մեկնեցաւ Բեղերպուրգի ու դատ բացաւ Նէվոյէ ՎրէՖՖի դէմ։ Նէվոյէ ՎրէՖՖի խմբագրութիւնը, նկատելով որ դատի յաղթութիւնը Բերգի կողմն է, առաջարկեց նմա 2000 ռուբլի պայմանաւ որ այլ ևս չշարունակէ դատը, սակայն Բերգ կը մերժէ յայտարարելով թէ ինքն մինչեւ այժմ ահագին գումար շահած կը լինէր և թէ այնուհետեւ դադրած են իւր շահագործութիւնը։ Բերգ կը շարունակէ դատն և վերջապէս կը վճռուի, և մեծ զարմացում առաջացնելու։ Նէվոյէ ՎրէՖՖի խմբագիրը երեք ամսուան բանտարկութեան կը դատապարտուի։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երէկ առաւօտ Դուրուչէշմէ, Մեծ-Եղբարս Բեամիլ փաշայի ապարանքն երթալով տեսակցութիւն մ'ունեցաւ Ն. Բարձրութեան հետ։

Ն. Սրբազնութիւն յետոյ Պալաթ գնաց ուր պիտի մնայ երկու օր եւ վաղն առաւօտ հանդիսաւորապէս պիտի պատարագէ Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյն մէջ որոյ տօնախմբութիւնն է։

Քաղաքական ժողովը յառաջիկայ նստին մէջ իւր դրասեղանին վրայ պիտի ունենայ Հիւանդանոցի Հոգաբարձութեան առաջարկներն և յատակագծերն ի վերաշինութիւն Հիւանդանոցի։ Հոգաբարձութիւնն իւր երէկի նստին մէջ վերջնապէս որոշած է Վարչութեան ներկայելի ծրագիրն որուն համեմատ կ'ստանձնէ վերաշինութեան գործն։ Այս ծրագրի գլխաւոր գծերն արդէն ծանուցուած են լրագրոյս մէջ։

Մուչէն հետեւեալ երկու հեռագրերն ստացանք երէկ իրիկուն.

ՄՈՒՇ, 6 Նոյեմբեր

«Մշոյ կրօնական դասն յաւուհատ վիճակի մէջ կը գտնուի խնամալով թէ Վան պիտի ղրկուի տեղւոյն Առաջնորդն, որ տասն եւ մէկ տարի գոհացուցիչ եղանակաւ Տէրութեան ծառայած եւ ազգը կառավարած է։ Ժողովուրդն յայտարարած է թէ չպիտի թողու իւր առաջնորդն։ Ցաւուն արդարութեան Լը խնդրենք որ խնդիրը քննուի եւ այնպէս առաջնորդի պաշտօնանկութիւնը կամ վերահաստատումն որոշուի։ Նոյնպէս մեր պարքը կառարած կը լինինք ծանուցանելով որ Արիստակէս եղբայրոյս իւր մէկ քանի ընկերներով ժողովրդեան պղտանքն հրաւիրած է իւր վրայ եւ եթէ անմիջապէս տակից չ'հեռացուցուի, պատճառ պիտի լինի խառնակութեան։

Իր դիմաց 12 վարդապետաց և 6 քահանայից
ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՈՒՍՏ ՔԱՀԱՆԱՅ

* * *

ՄՈՒՇ, 6 Նոյեմբեր

«Առաջնորդնիս, իւր տասցած հեռագրոյ համաձայն, մեկնելու կը պատրաստուի ժողովուրդը սոյն որոշման դէմ բողոքելով կը յայտարարէ թէ չպիտի թողու զիւր Առաջնորդը։ Գաւառական ընդհանուր ժողովն ի նիստ գումարելով իւր երանելոյ բռնաբարութեանն վրայ ցաւ յայտնեց եւ այժմ կը խնդրէ հասու լինել թէ այս որոշում ո՞ր օրինաց համաձայն տրուած է։ Թղթատարութեան նամակներ յանձնած ենք որոց պատասխանով միայն կարելի է հանդարտեցնել ժողովուրդն։

Իր դիմաց գաւառական ընդհանուր ժողովոյ Մշոյ

Ապենդարէր ԱՐՄԵՆԱԿ — Ապենդէր ԿԱՐԱՊԵՏ

Ազգ. Կեդրոնական Վարժարանի առաջին տարւոյ ձեւակերպութիւններն ամբողջացուցած լինելով, անոնց վերջնական արդիւնքն է հետեւեալը։

Վարժարանին աշակերտելու համար արձանագրուած ուսանողաց թիւն հասած էր 117ի։ Ասոնցմէ 96ը ներկայացած են քննութեան և 62ն արժանացած են ընդունելութեան։ Թոչակաւորաց թիւը կը հասնի 28ի, Հրներուներնը 34ի։ 62 աշակերտաց 19ը դաւառացի են և 43ը Պոլսոյ զանազան թաղերէն

Սպարթալեան Թագաւոր էֆէնտի որ մէկ քանի օրէ ի վեր մայրաքաղաք կը գտնուէր, այս աւուր ռուսական շոգենաւով Իզմիր կը վերադառնայ։

Ցաւ ի սիրտ հարկադրեալ եմ ազգ. առնելու թէ անդիսադրելի արգելքի մը պատճառաւ Մէջմաճայը-Ախալ (Պատկեր-Հայկենաց) թերթը դժբաղդաբար այսօր պիտի չկրնայ հրատարակուիլ։

Ցիշեալ արգելքի շարժառիթը պիտի յայտնեմ առաջին տարիս։

8 Նոյմ. 86. Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՄԱՍԻՍի այս աւուր Թիւը կը պարունակէ.

«Կեսարիոյ վանքերն — Վանը Ս. Կարապետի (Վարանդէն). — «Նկարագրական — Էջմիածնայ վանքը (բժիշկ Աբրահամ «Նոր Դար») — «Երկու բարեկամներ-Վէպ (Թարգմ. Ց. Մ. Պոհանեան). — «Բանաստեղծական. Առ Ցակոբ էֆ. Մատթեոսեան ի մահ իւր վաղամեռիկ դստեր (Դալուստ Տէվրիշեան). — «Տեղագրական. Ուխտագնացութիւն մը ի Սեպուհ (Կ. Տ. Խաչատուրեան). Մասիսի խնդիրները. — Շաբաթական Սուրհանդակ. (Տ. Ա.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Ֆրանսական Հանրապետութեան նախագահն հետեւեալ պատուանշանները նուիրած է.

Պատուոյ Լեգէոնի առաջին աստիճան՝ Բարձր. Մեծ-Եղբարս Բեամիլ փաշայի և Աղբունեաց հրամանատար Վասիֆ Կապի Օսման փաշայի։

Նոյն պատուանշանի երկրորդ աստիճանը՝ Վեհ. Սուլթանի Թիկնապահ Ահմէտ փաշայի, Խարթեշիլի արարողապետ Իպրահիմ պէյի, Արտաքին գործոց նախարարութեան ընդհ. քարտուղար Նաում էֆէնտիի, նոյն նախարարութեան առաջին թարգմանիչ Տատուտ էֆէնտիի և Վեհ. Սուլթանի սենեկապետներէն Իմին պէյի։

Պատուոյ Լեգէոնի երրորդ աստիճան՝ Վեհ. Սուլթանի Թիկնապահ Ժոմալին գնդապետ Հաղդը պէյի և տեղակալ-գնդապետ Օսման պէյի, Խարթեշիլի արարողապետի օգնական Ղալիպ պէյի և Վեհ. Սուլթանի Թիկնապահներէն Մէհմէտ Թէվֆիզ եւ Ահմէտ Շէֆիզ պէյերու։

ՊՈԼԻՍԱՐԱԿԱՆ ԴՈՐՄԵՐ

Բաւղարս զօրավարն որ այս չորեքշաբթի օր պիտի մեկնէր Սոֆիայէն, իւր վերջնադրոյն պայմանաժամն երկարած է 9/20 Նոյեմբեր, այսինքն մինչեւ այսօր։ Զօրավարն այս զիջումն ըրած է նկատելով որ պուլկար խնամակալութեան և Նախարարութեան անդամոց ոմանք Թրնովայէն Սոֆիա ուզեւորելու վրայ լինելով, երկէ միայն պիտի կարենային ի ժողով դումարիլ պատասխանելու համար Զարին ներկայացուցչին տրուելիք պատասխանը։ Եթէ պահանջուած գոհացումը չտրուի Ռուսիոյ, Բաւղարս զօրավարն այսօր պիտի մեկնի Սոֆիայէն և կը կարծուի թէ Փիլիպէլի ու Կ. Պոլսոյ ճանրով պիտի անցնի։

* * *

Երէկ երիկուն առնուած Հէպարի հեռագիր մը, որ հրատարակուած է իւր կարգին, կը յայտնէ թէ Ռուսիոյ և Պուլկարիոյ յարաբերութեանց շարունակութիւնն անհնարին նկատուած է Բաւղարս զօրավարին կողմէ որ ռուս հիւպատոսաց հետ պիտի մեկնի այսօր պուլկարական հողէն։

Ռուսական դեսպան Պ. Նէկիտոֆ հինգշաբթի օրը Բ. Դուռն երթալով ի պաշտօնէ ծանուցեր է Բաւղարս զօրավարի մեկնումն որոշումն և յարաբերութեանց խզման հաւանականութիւնը։ Ռուսական դեսպանի այս զեկոյցին վրայ, Նախարարաց Խորհուրդն յարտասովոր նիստ դումարուելով, երկար խորհրդակցութիւն մ'ունեցեր է։

Թուրէֆ իւր այս աւուր խմբագրականին մէջ պուլկարական խնդրոյն վրայ խօսելով կ'ըսէ թէ, եւրոպական Տէրութիւնք մինչդեռ մէկ կողմէ կը յայտարարեն որ իրենց նպատակն է խաղաղութիւնը պահպանել միւս կողմէ պատերազմական պատրաստութիւններ կը տեսնեն, մանաւանդ Ֆրանսա և Գերմանիա որք անդուլ անդադար կ'աշխատին իրենց զինուորական զօրութիւնն աւելցնելու։ Թուրք թերթն այս տեսութեամբ հակասութիւն մը կը նշմարէ եղած խոստումներուն և կատարուած գործերուն մէջ և կը յարէ թէ Տէրութեանց զինուորական պատրաստութիւնը ո՛չ միայն մեծ հոգ և մտատանջութիւն կը պատճառէ խաղաղութեան պահպանման համար, այլ նաև մեծ ազդեցութիւն կ'ընէ եւրոպական գործոց վրայ։

Թուրէֆ կ'աւարտէ իւր տեսութիւնները յայտարարելով թէ այս վիճակ երբէք պատերազմի մը առիթ չտար, այլ միայն բաղաքականութեան ընթացքը կրնայ փոփոխել։

—Բերլայի դեսպանատանց հասած հեռագիրը կը ծանուցանէն թէ պուլկար խնամակալութիւնն յայտարարութիւն մը հաներ է որով ի դէն կը կոչէ Պուլկարի բոլոր արու բնակիչներէն, մինչեւ 40 տարեկան եղողները։

—Ադր. Պոլսէն կը գրեն նոյմ. 4/16 թուականաւ.

«Երկու օրէ ի վեր Արեւ. Բուլղարիէ առնուած լուրերը բնաւ ապահովիչ չեն։ Անիշխանութիւն և անկարգութիւն առաւել քան երբէք կը տիրեն գաւառին մէջ։ Տեղական իշխանութիւնք ամեն ջանք ի գործ կը դնեն գաղթականութիւններն արգիլելու համար։ այս նպատակաւ խիստ հսկողութիւնք ի գործ կը դրուին սահմանագլխոյն վրայ։ Փիլիպէի մէջ ձերբակալութիւնք հետզհետէ կը բազմանան։ բանտերուն մէջ տեղ մնացած չլինելուն պատճառաւ, ձերբակալեալք քանակոծուելէ յետոյ ազատ կը թողուին»։

—Կրուէֆ հաղարպետն և Պէնտէրէֆ հարիւրապետն որք Ռուսճուգ կը գտնուէին, տեսնելով որ կրկին ձերբակալուելու վտանգին ենթակայ են, Օտէսա փախեր են։

—Սոֆիայէն նոյմ. 1 թուով կը գրուին առ Լիոնէ Ռոնտէն.

Խնամակալութեան եւ Պ. Զանքոֆի միջեւ համաձայնութիւն մը գոյացնելու համար եղած փորձերն երբէք լուրջ կերպարանք մը չեն առած և չպիտի կրնան ելքի մը յանգիլ։ Պ. Զանքոֆ ինք չէր ուզեր ստանձնած այդ ձեռնարկին, նախաձեռնութիւնն և իւր (ռուսասէր) կուսակցութեան պատասխանող այն երեսփոխանն որ ստանձնած էր այդ հոգը, կտրեալ արտօնութիւն ստացած չէր իրմէ այդ պիտի պաշտօն մը կատարելու համար։ Այսու հանդերձ, երբ կոչում եղաւ իւր հայրենակցութեան, ուսանելով որ պարզապէս խաղ մ'էր այս, հրաժարեցաւ, իրմէ խնդրուած խորհուրդները տալէ յետոյ։ Իրեն համար մէկ միջոց կայ միայն Պուլկարիան ազատելու այն ճանապարհէն յոր ինկած է. այն է Ռուսիոյ պահանջմանց հետեւելէ կէս առ կէս։ Նախ պէտք է որ Խնամակալութիւնն անհետանայ, վասն զի նախատեսուած չէ Սահմանադրութեան մէջ։ Նախարարութիւն մը միայն պէտք է մնայ, Ռուսիոյ նշանակած եղանակու կազմուելով։ Այդ նախարարութիւն պէտք է ընտրել ազգային մեծ ժողովն եւ Ռուսիոյ հետ համաձայնութեամբ բարեփոխուելու են Սահմանադրութեան քանի մը կէտերն յետ որոյ կրնայ կատարուիլ իշխանի ընտրութիւնը։

Պ. Զանքոֆ կը խորհի նաեւ թէ ա՛զգ. այն Պուլկարիոյ պատերազմական նախարարն, այլ եւ բոլոր կրթիչ ապագի և վարելու պետերը ռուս լինելու են։ Իւր կարծեօք, այս կերպով մի՛ն կարելի է վերակազմել պուլկարական բանակն։

Սէլամլըքի հանդէսը սովորական շքով կատարուեցաւ երէկ Հէրէքէ մզկիթին մէջ։ Հրամանաւ Վեհ. Սուլթանին, Սէլամլըքին ներկայ դտնուող վաչտերը զօրահանդէս մը կատարեցին դոր Ն. Վեհափառութիւնը մզկիթէն դիտեց և գոհունակութիւն յայտնեց այս առթիւ։

—Աբբունի թնդանօթարանի կից զենագործարանին մէջ պատրաստուած թնդանօթներու փորձերը կատարուեր են այս օրերս Զաթալճայի կողմերը։ Եղած փորձերէն հաստատուած է թէ այդ թնդանօթք ամեն կերպիւ կը համապատասխանեն պահանջուած կատարելութեանց։

—Հարիւր հազար ոսկւոյ փոխառութիւնը դոր Եկմտական նախարարութիւնն այս օրերս կնքեց Ղալաթիոյ ուղանաւորներէն, կառավարական պաշտօնէից մէկ մէկ ամսականի վճարման յատկացուած է։ Այս փոխառութեան համար սեղանաւորք հրապարակի վրայ մէճիտիէ դրամ ժողովելով, ոսկւոյ և արծաթի փոխանակութիւնը մէկ զուշի տարբերութիւն ունեցած է։

—Նախընթաց դիշեր ֆրանսական դեսպանատան մէջ ի պատիւ Միրզա Մոհսէնի խանի տրուած հացկերոյթին ներկայ էին, բաց ի պարսկական դեսպանէն և նորա խորհրդականէն, հելլենական դեսպանն, անգլ. դեսպանատան երկրորդ թարգման Պ. Բէյտէի, ռուսական դեսպանատան առաջին քարտուղարը և Շղէ կոմսն։

— Թնդանօթարանի մէջ Քրիւբի բաղմաթիւ թնդանօթներ որոշուած են որք Դարդանէլի ամրութիւնները պիտի զրկուին։

—Դատական նախարար Ձէվատէթ փաշայի որդի և Պերատի Խորհրդոյ անդամ Մէհմատ պէյ յանձն առած է փիլիսոփայութեան դասախօսութիւններ ընել Պոլսոյ իւղիտական վարժարանին մէջ։

—Սաֆիթպէյ (Մուրիոյ դաւառ) կառավարիչ Սալիհ պէյ որ Պոլսոյ թիպլուտական Գ. շրջանակի նախագահ անուանեցաւ, Մանիսայի կառավարչին որդին է և Մեծ-Եղբարքս Բեամիլ փաշայի փեսան։

—Ադրիանուպոլսոյ կ'ասակալ Հաֆի Իզզէթ փաշա մայրաքաղաքս գալու հրաման խնդրած է, իւր ստացած պատուանշաններուն համար անձամբ իւր ընդհանկալիքը մատուցանելու յոտս Վեհ. Սուլթանին։

—Բէյճի Հրոս յանձնախումբեր ղրկած է Կ. Պոլսոյ շրջակայ գիւղերը պատրաստ ծախսոտ գտնելու։ Այդ յանձնախմբի անդամք ընդ ամենն 40,000 օխտա ծախսոտ գտնած են բարձր գներով և ղրկած են զայն Սաֆիրայի, Բիւչիւք-քէյլի և Բէյկոզ-Պուրկազի մթերանոցներն ուր 20ի՝ աւելի կառնայք և աղջկունք Կ'աշխատին ծխախոտի տերեւներու պատրաստութեան։

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ
ԲԵՐԱՅԻ

Պէպէն, երէկ գիշեր, Նոր Թատրոնին մէջ, կատարեալ «յաջողութիւն» մ'եղաւ. սիւն տեսարանն՝ երգով և մ'նուանդ սերուն ու նրբամիտ խօսքերով լեցուն կատակերգութիւն մը, որ խնդացուց, շատ խնդացուց հանդիսականները։

Եւ այդպէս ալ կար։ Պառոն մը և պառոնուհի մը պատմ մ'ունին Կասդոն անուամբ, քսաներկու տարեկան, զոր տարուին «Պէպէ» կը կոչեն, որովհետեւ կը կարծեն զայն ղերծ ամեն մոլութիւններէ, սիրան ու միտքը կոյս, մանրամով դիւրակամ ու վատոյժ։ Կ'երեւակայէք անշուշտ թէ այնպէս չէ բնաւ։ Պ. Կասդոն, երեսի վրայ թողած իւր իրաւաբանական հաւատմը, լաւագոյն կը համարի հեռաւոր զուարճութեանց, ժամանակն անցուելով խառնակեցիկ կանանց հետ, — անշուշտ այս ամենն առանց գիտութեան իւր մօր՝ որ հարար գդեանքներով կ'զբաղի իւր Պէպէն, և իւր հօր՝ այր միակ զաւակն է լրագրաց ընթերցումն, հետեւելով քաղաքական շարժման ու խորհրդարանաց ատենաբանութեանց։ Մինչդեռ թէ Կասդոնի ծնողք, իրենց զաւկին իրաւագիտական ուսումը կատարելագործելու համար, տան մէջ կրկնիչ դասատու մը կը բռնեն, Պ. Բէդէյեան։ Կասդոն կը համբուէ իւր ծնողաց դասերն առնուլ իւր Արթիւր բարեկամին հետ, որ ընկերն է իւր շահատակութեանց։ Այս դասատուութիւն խաղն ամենէն զուարճալի մասերէն մին է, զի մինչ Բէդէյեան տուն կուգայ օրինագրքէն հատուածներ, անդլիս երկու երիտասարդք կը խօսին իրենց բրած եւ ընելիք շահատակութեանց վրայ։ Երիտասարդաց երկու սիրուհիներուն գալը նոյնպէս խիստ ծիծաղաշարժ տեսարան մ'է. երիտասարդք, լաւագոյնս զբօսնելու համար, գուրս կը հանեն Պ. Բէդէյեան եւ իրենք կ'զօսնուն երգով եւ խօսակցութեամբ։ Կասդոնի հայրը վրայ կը հասնի նոյն միջոցին. աղջիկները կը փախչին, և պառոնը բացատրութիւն կը պահանջէ դատաւորէն թէ ինչ էին այն երգերն և դասատուն կոհարութիւնք։ Բէդէյեան կը չուարի, սակայն արթուն միտք մ'ունենալով, կ'ըսէ անմիջապէս թէ իւր աշակերտաց մտաց մէջ լաւագոյնս ազատութիւնս համար օրինագրոց հատուածները, երգով կ'ուսուցանէ զայնս։ Պառոնը կրկնել կուտայ այդ հատուածներն, եւ դատաւոր եղանակներ կը յարմարեցնէ օրինաց հատուածներուն զոր միաբերան կ'երգեն իւր աշակերտք։ Խաղը լեցուն է այս տեսակ ծիծաղելի տեսարաններով։

Նոյն միջոցին արդէն դատաւոր Բարիզ այցելութեան եկած են Պ. եւ Տիկին Բէնանիլաս, ազգականք պառոնին և պատրոնուհւոյն։ Կասդոն կը նշմարէ իւր քէՖն որ գեղանի է և կ'որոշէ անմիջապէս ի գործ ձեռնարկել, Տիկին Բէնանիլասի հնարքներու վայելելու համար։ Ուստի պատրաստին կը խնդրէ ժամադրութիւն մը եւ կ'ընդունուի։ Պ. Բէնանիլաս ալ իւր կարգ, հանդարտ ցուլի գիւսուն, կը սկսի անհաւատարիմ լինել իւր կնոջ եւ երիտասարդաց հետ համաձայնելով, խօսք մէկ կ'ընեն գիշերը միասին ժամանակ անցուցանելու համար։

Սակայն կը տեսնեմ թէ տղերքը կը ընդունին և ընթերցողը մեծ բան մը հասկցած չէ խաղին ամփոփութենէն։ Պառոնուն այն է որ խաղին երկրորդ և երրորդ արարածներուն չափազանց խնդուած են և զայնս պատմելը կը տեւէ երկար, շատ երկար։ Բաւ է ըսել միայն թէ, Պառոնն և Պառոնուհին վերջ ի վերջոյ կը հասկնան իրենց «Պէպէ»ին ինչ բարի ծաղիկ մ'ըլլալը, Պ. Բէնանիլասը կը կասկածի իւր կնոջ յարաբերութեանց վրայ Կասդոնի հետ, նախանձու տեսարան մը տեղի կ'ունենայ, սակայն Պառոնին մէկ ճարտար խորհուրդներ հիւ Պ. Բէնանիլասի կասկածները կը փարատին, և խաղը կը վերջանայ Պ. Բէդէյեանի սա նշանաւոր խօսքով. «Երիտասարդ մը իւր սիրակցութիւնները կ'սկսի նա՛ սուտ հիներէ, յետոյ ֆ-ֆոչներէ, և կը յանգի անմանացեալ կանանց», յայտագիր որուն կէս առ կէս հետեւած է Պէպէ։

Քանի մը խօսք ալ դերասանաց մասին. Պ. Տուչէ (Բէդէյեան) ի հանդէս եկաւ իրր առաջնակարգ կատակերգակ մը որ լաւ գիտէ արհեստին նրբութիւնները, ուստի եւ ջերմագոյն ծափահարեցաւ. Պ. Տիտէ (Կասդոն) չփոյած ու անուշակ տղա մը դերին մէջ, ու Պ. Լէկոնտ՝ ընտանեաց հօր յարգամեծար դերին մէջ, խիստ լաւ խաղցին։ Մասնաւոր յիշատակութիւն մը Տիկին Ժէսսաւի որ սպասուհւոյ դերը կը կատարէր,— որովհետեւ սպասուհի մ'ալ կայ, երախայրիք կատարելութեանց — այնքան դեղեցիկ կերպով։

ՎԱՃԱՌԱՏՈՒՆԻ
ՓԱՓԱՏՕՓՈՒԼՕ ԵՂԲԱՐՔ

Պ. Պ. ՓԱՓԱՏՕՓՈՒԼՕ ԵՂԲԱՐՔ պատիւ ունին ծանուցանել մեծարգոյ հասարակութեան թէ Լիոնի ամենակարեւոր և լաւագոյն գործարանաց հետ յարաբերութիւն հաստատած լինելով, այս անգամ եւս սովորական ընտիր ՄԵՏԱՔԻՍԵԱՅ ԿԵՐՊԱՄՆԵՐՈՒ հաւաքում մը ինչպէս նաեւ Փարիզս վերջին նորաձեւութեան վերաբերող կառնէ-բէ-բէր տերել տուած են յոյժ հաճոյա և շահաւոր գներով։

Ցիշեալ վաճառատուները կը գտնուին ի Մեծ-Շուշկա Կ. Պոլսոյ։

Ի Բէյսպազի-խան թիւ 3. 4. 8.
Ի Բիւրքիւլէր » 21.
Սանտալ Պէդէսթէնի դուռը » 34.
Ի Դարիսաքճըլար պարը » 31. 33.

1—56

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ
ԱՅԺԱՆՍ ՀԱՂԱՍ

ԽԶՈՒՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԸՆԴ ՄԷՋ ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ

Սոֆիա, 19 Նոյեմբեր

Քաղաքս զօրավար երէկ Պուլ ար կառավարութեան յանձնեց ծանուցագիր մը ուր կ'ըսէ թէ իրաւունքնք կ'ապացուցանեն որ Ինքն հակալութիւնն որոշած է գործել չանսալով Ռուսիոյ։ այս կերպիւ Պուլկար կառավարութիւնն անհնար գործած է Ռուսիոյ հետ յարաբերութեանց շարունակութիւնը։ կը ծանուցանէ հեռաւոր թէ յառաջիկայ շաբաթ (այսօր) պիտի մեկնի, իւր հետ տանելով Պուլկարիոյ ամեն ռուս հիւպատասանաց պաշտօնեայները։

«ՄԵՂՄԱԳՈՅ» ՃԱՌ ԲԱԼՆՈՒԻ ԿՈՄՍԻՆ

Վիէննա, 19 Նոյեմբեր

Աւստրիական պատուիրակութեան Ցանձնաժողովոյ երէկի նստին մէջ, Բալնոքի կոմս կրկնեց իւր ծանօթ յայտարարութիւնները։ Կը հաստատէ թէ Ռուսիոյ հետ մերձեցումն երբէք ալեսած չէ։ Աւստրիոյ եւ Գերմանիոյ միջեւ կեցող բարեկամութիւնն։ Կը հաստատէ թէ առաջին անգամ Պուլկարք բռնաբարած են Պէրլինի դաշնագիրը։ Կը խոստանի թէ Պալքանեան երկրաց մէջ, ռուս գաղթականներն աւելի բարեմիտ են Աւստրիացի և Հունգարիացի գաղթականներէն։ Կը հաստատէ թէ Աւստրիոյ համար կարեւոր է բարեկամական յարաբերութիւններ ստեղծել Ռուսիոյ հետ։ Կը յարէ վերջապէս թէ տերութիւնք այս պահուս կը քննեն Պուլկարիոյ նոր իշխանին անուանման խնդիրը։

Այս ճառին նպատակը լինել թուի մեղմել կոմս Բալնոքիի նախորդ յայտարարութիւններն որք յոյժ ազդու թուեցան Ռուսիոյ նկատմամբ։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնք, 19 Նոյմ.

Ընդդիմադիր կուսակցութեան անդամոց մեծ մասը, Պ. Տէլիեանիի ստէպ գուսարուելով, որոշեցին բոլորք մ'ուղղել առ ժողովուրդն ընդդէմ երեսփոխանաց ժողովոյ լուծման։

ՖՐԱՆՍԱ

Բարիզ, 12 Նոյմ.

Պ. Կաֆէտ Ֆրանսական Ակադեմիոյ անդամ ընտրուեցաւ փոխանակ հանգուցեալ Պ. Ֆալլուի։

Դամասկոսի Ֆրանսական հիւպատոս Պ. Ժիլլէռ. Հալէպի հիւպատոս անուանեցաւ փոխանակ Պ. Բէռէդիէի որ Դամասկոս փոխադրեցաւ նոյն պաշտօնով։

ԳՐԱՄԱԿԱՆ
ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 8 Նոյմ.

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹԼԹԻՑ
Օսմանեան Քոնսոլիտ

		Դահեկան
Երէկ երեկոյ գոց. (Մխոց. D. Ութ գ. կ.		15 18
Գրաւոյին գոցուելէն վերջը	»	15 20
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուելուս	»	15 21
Բարձրագոյն գին	»	15 23
Նուազագոյն »	»	15 20
Կէս օրին		15 23

ԻՍԹԻԴՐԱԶԸ ՏԱԽԻԼԻ

Երէկ երեկոյ		34 06
Այս առաւօտ		34 30
Կէս օր		34 31
Փոխառութիւն 1858)	A. Ութ	23
» 1862)		
» 1860)		
» 1863)	B. » »	14 15
» 1872)		
» 1865)		
» 1869)	C. » D.	15 21
» 1873)		

ԻՆԵՖԼԷ ԵԳԻՊՏԱԿԱՆ

Երէկ իրիկուն գոցուելուս	82 30
Այս առաւօտ բացուելուս Գ. Կ.	82 30
Կէս օրին	82 30

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 19 Նոյեմբեր, ժամ 5 վայր. 15 երեկոյ

Լէգիս. քանսոլիտ	102 1/16
Ռոմ. » Ութերի Գ. բացուելուս	14 1/16
» » » գոցուելուս	14
» » » Ա.	23 1/2
» » » Բ.	14 1/2
» » » Գ.	14
Օթոման 1871	73 3/4
Փոխառութիւն 1877	85 1/4
Պանք Օթոման	10 3/4
Ռուսական փոխառ. 1873	97 3/4
Եգիպտական միացեալ (Ունիֆիէ)	74 5/8
» առանձն. (Բրիմիէ)	94 5/8
Ցարդ Պանիէ	72 1/4
Տօմանիալ (փոխառ. Բոլիէր)	96 1/4
Հունգարական պարատեղթ 4%ի	— —
Ֆոխանակութիւն Բարիզի վրայ	25 526

Վիէննա, 19 Նոյեմբեր, ժամ 4 երեկոյ

Ֆոխանակութիւն Լոնտոնի վրայ	126 10
Օսմանեան երկաթուղի	17

Բարիզ, 19 Նոյեմբեր, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %ի	109 75
» » 3 %ի	82 87 1/2
Օսմանեան քանսոլիտ Ութերի Դ. բացուելուս	14 30
» » » գոցուելուս	— —
» » Ութերի Բ.	14 50
» » Գ.	14 20
Օսմանեան երկաթուղի	33 75
» Բեժիի բաժնեթուղթք	398 75
Պանք Օթոման	522 50
Դրեսի Լիոնէ	593 75
» Ֆոնսիէ	1421 25
Բաժնեհատու Լիոնի	— —
Յուէզի ջրանցք	2103 75
Իտալական 5%ի 1877ի	101 3/4
Իտալական Ռանթ	101 40
Եգիպտական միացեալ	378 75
Օսմանական (արտաքին)	65 5/8
Բրիտանիէ թիւրք	356 25
%ի Հելլենական	310
Չէք Լոնտրայի վրայ	25 36

ԲԱՐԻԶ ԹԻԹԻ ՊՈՐՍԱ

Բարիզ, 19 Նոյեմբեր, ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %ի	— —
Օսմանեան քանսոլիտ Ութերի Դ	14 37 1/2
Եգիպտական	380

ԱՌԱՋԻՆ ՈՒՂԻՂՈՐՈՒԹԻՒՆՍ
ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

14 ՅՈՒՆԻՍ

Աւստրիական դեսպանատունն լուսաւառուած է, զի ունի երեկոյթ Անդէն, մեզ ծանօթ անձերէ զատ, օսմանեան դեսպանատունի առաջին քարտուղարն, Օհան Պաղտասարեան էֆէնտի, դեղեցիկ ազնիւ, իմաստուն և դեսպանի չափ ազդեցիկ, Կոստանդնուպոլսի աւստրիական դեսպանատունի խորհրդականն, Պ. Տր Քօսժէյ, ճարտար դիւանագէտ որ կը խօսի թուրքերէն, Ցաճկաստանի արտաքին նախարարութեան քաղաքական դիւանի պետն, Ֆէրիտուն պէյ, Պէլժիքի օսմանեան արտասովոր պատուիրակն և լիազօր դեսպանն, Թարաթէտսօրի էֆէնտի, Իտալիայի դեսպանն, կոմս Տը Լոնէյ, սրամիտ և սրաբեթ, լայն ճակատով և թաւ մօրուքով, և արդէն խուլ թեւեւ դեռ երիտասարդ, և Աւստրիա-Հունգարիայի դեսպանն, կոմս Քարօլիի, գրեթէ խուլ, բարձրահասակ և խարտեաշ, փառաւոր մօրուքով և անվերջ պեխերով։ Իւր կին, աւելի ուշիմ և ազդեցիկ, կը փայլի իգական սեռին մէջ, զի է աշխարհի գեղեցկագոյն կիներէն մին և հունգար գեղեցկութեան հրաշակերտն։ Իւր պատկեր, մի հոյակապ արուեստագիտի նկարուած, կը կանգնի մի յատուկ սենեակի մէջ, և հիւրերն, հիապիշ դիտելէ յետոյ այս չքեղնաղ կտաւ, զոր մի կանթեղ կը լուսաւորէ Տիրամօր պատկերին պէս, կը փնտռի դիմել ընագրին, որ կը ժպտի զերդ մի Ամպոն որ վարժուած է յաղթել։

15 ՅՈՒՆԻՍ

Գերմանիայի ոստանն, այս եղանակի մէջ, կը նմանի մի ճշմարիտ հնոցի. այլ մարդ կը զոմանայ երբ պատահի Պ. Մաքէնզի Ուալլեսի պէս մի անձի։ Գրաբ-ի թղթակիցն Բէգերսպուրկէ փոխադրուած է Պէրլին, որ կը գրաւէ այժմ մամուլի բոլոր ուշն։ Ա.ստ անգլիացի գրագէտ, որ նկարագրած է ռուս ժողովուրդն մի հատորի մէջ որ եղաւ դասական, ունի մի նշանաւոր նրբամտութիւն, զոր սակայն գիտէ պրօղել մի արտաքին պարզմտութեան տակ, թէեւ աչքերն կը մատնեն զայն իրենց ծալքի ամիս

ձերէն զատ, ռուս դեսպանատունի խորհրդականն, Պ. Արաբօֆ, որ խարտեաշ գլուխն կը փոթորկի դիւանագիտական հոգերով, Տաճկատանի արտաքին նախարարութեան խորհրդականն, Բարնիս էֆէնտի, Անգլիացի որ իւրացուցած է Թուրք բարոյականն, Յունաստանի դեսպանն, Պ. Բանկվի, ծեր և կարճ, 'զոր Գերմաններն կը մեծարեն իւր հմտութեան համար, Սերվիայի արտաքին նախարարն, Պ. Ժ. Ռիսդիչ, Թուխ մորթով, սեւ մօրուքով և աղքատ դէմքով, Ռումանիայի նախարարապետն, Պ. Գռադիանօ, համակիր գլուխ, և արտաքին նախարարն, Պ. Գոկմնէչեանօ, մեծամանչ եւ մաղեղ, կոմս Եուլիուս Անդրասի, շիկամորթ, սեւաչեր և նրբահասակ, այր վրայ գերեցիկ սեռն կը նշմարէ ասպետական վեհութիւն, և Բրլ օվ Պիգընսֆիլտ, որ կը դեղերի պատերին տակ, գոռալ և վայրի, և հազիւ կ'ողջունէ միւս լիազօրներն։

18 ՅՈՒՆԻՍ

Ռուսաստանի դեսպանն է պարօն Տ'Ուպռիլ որ Ֆռանսացոյ պէս կը խօսի ֆռանսերէն, որպէս գրեթէ բոլոր Ռուսերն։ Պէտութեան և պարտի նախարարն է պարօն Տը Շլարնից, ադնիւ անձ որ սկսած է ծերանալ, իւր կնի է մի սիրուն երիտասարդուհի, բարեկրթութեան և համեստութեան տիպար, 'զոր շատեր կը նկատեն իբր Պերլինի առաջին տիկնին։ Ա.յլ վերադառնանք մեր պանդուկ, որ պէտք հիւրասոցն կը պարփակէ անթիւ հաւատիրեալներ, գերմանացի հրեայ, զի մի եբրայական հարցնիք կը կատարուի անդ։ Արարօղութիւնն է պարզ և կարճ. հարմնակներն կ'երգեն շարականներ, որը, տրպուած, կը բաշխուին ժողովուրդին և են գերմաներէն, եբրայական ցանցառ տողերով ընդհատուած. ռաբբին կը քարոզէ գերմաներէն, կը մատուակէ գինի փեռային և հարսին, որը կը խմեն նոյն բաժակի մէջ, և կը հրաւիրէ 'զանոնք տալ իրենց սիրոյ ապացոյցն։ Թագաւոր և թագուհի կը փուքնան համբուրել իրար հրապարակաւ։ Մաղթենք որ չը մոռանեն երբէք այն նրբամիտ հեղինակի պէս որ կը նմանեցուցնէ ամուսնութիւնն մի պաշարուած քաղաքի. արտաքինները կը ցանկան թափանցել անդ, ներքինները փախչել անտի։

19 ՅՈՒՆԻՍ

«Ժուռնալ դէ Տէպա»ի և «Ժուռնալ դը Սէն Բէթերսպուռ»ի ռուս թղթակից Պ. Արթուր Ռաֆֆալովիչ յիսոյ, դեռահաս գրիչ որ, տարբեր սկզբնատառներով շէշ-կ-ոյ, կը դրէ Գերմանիայի աւետարանական եկեղեցոյ նախագահն և Պէրլինի առաջնորդն, Պ. Հէրմէս, պատկառելի կրօնաւոր որը նայուածքն ունի սրբութիւն և խօսքն օծում։ Գիշեր է, և անգլիական դեսպանատունի երեկոյթն կը համախմբէ, արդէն յիշատակուած անձերէն զատ, «Դայլի»ի բարիզեան թղթակիցն, Պ. տը Պլուվից, ճաղատ, տակառի պէս կարճ և լայն, հրէական նրբանուութիւնով օժտուած, Ռուսաստանի պետական խորհրդականն և Երզրումի նախկին հիւպատոսն, Պ. Նիդպայ Իվանով, դիւանագէտ որ, ճանաչելով ուղղկիցս, կը համբուրէ անոր աջ և կ'անուանէ 'զայն «Հայրիկ», Զաբի ազնուական պալատականն և ռուս դեսպանատունի առաջին քարտուղարն, Պ. տը Քօցէպիւ, Բէրդերսպուրգի յոյն դեսպանն, Պ. Վրայլաս Արմէնի, ծեր և բարձրահասակ խմաստասէր այր քաղաքաբարոյութիւնն կը համոզէ իւր հայ ծագման, Հռոմի աւտրիական դեսպանն, պարօն Տը Հայմերլէ, որը դեղին կը յիշեցնէ ծիլ Սիմոնի պատկերն, կոմս Շուվալօֆ, համակիր և պերճախօս, և Անգլիայի դեսպանն, Լօրտ Օտո Ռըսլը, որ դեռ կը պահէ իւր մատենադարանի մէջ Միլդրնի հայ թարգմանութիւնն (Դրախտ Լուսաւոր), 'զոր Աւդերեան ձօնած է իւր առատաձեռն հօր։ Դեսպանուհին, կճեայ արձանի պէս պղտպղտուն, արժանապէս կը ներկայացուցնէ բրիտանական գեղեցկութիւնն։

20 ՅՈՒՆԻՍ

Թէեւ եւրոպական քաղաքներն ունին ընդհանրապէս մի տեսակ միօրինակութիւն, ուր արեւելեան ուղէսորն զուր կը փնտռէ անակնկալն բանաստեղծութիւնն, հեռաբերբերաշարժ խումբեր մերթ կը նշմարուին անդ։ Ահա երկու ճերմակ շուներ, տօթակէզ գլխիկոր և լեզուակախ, որը կը քաշեն մի սայլակ ուր երկու խարտեաշ մանկիկներ կը տատանին ցնցոտիներով։ Մի հէգ կին կ'առաջնորդէ 'զանոնք, մայրն անշուշտ, գեղջուկ հագուստով ծածկուած։ Ահա մուրացիկ ամիներ. այրն է կոյր, կինն կմախք։ առաջինն կը փչէ սրինգ, երկրորդն կը հիւսէ գուլպայ։ Նուագարանն կարտասուէ, թարգմանելով իրենց վիշտը։ Ի՞նչ տխուր երաժշտութիւն։ Եւրոպացին իսկ, որ կը կարծէ թէ իրաւունք ունի հաճելի մարն, թէեւ թոյլ զէնքերով կը մաքառի աղքատութեան դէմ, կաղդուսի այդ ողբմ նուագներէ, և Գերմանն, որ ստացած է կծծութեան հմբաւ, կը նուիրէ իւր լուսայ, թէեւ ոչ առանց վարանման։

21 ՅՈՒՆԻՍ

Զօրապետ պարօն Տը Պիլոդ, Շուէյնօրվէկիայի արտասովոր պատուիրակն և լիազօր դեսպանն, կը բնակի մի սիրուն ապարանի մէջ։ Կը գովէ թուրք ժողովուրդն և ճանչցած է մի քանի բաշաներ որոց կը համակրի։ Ա.յլ թողունք երկրորդական ներկայացուցիչներն և դիմենք Աւստրիա-Հունգարիայի դեսպանատունն, որը երեկոյթն կը համախմբէ առաջնակարգ անձնաւորութիւններ։ Որպէս միշտ, տեսակցութիւններն կը կատարուին ոտքի վրայ և կը տեւեն կարճ, զի երեկոյթն կը գրաւէ հազիւ մի քանի ժամեր և ծանօթ անհատներն են յոյժ բազմաթիւ։ այլ այս արագ բանակցութիւններ ունին ծանրակշիռ կարեւորութիւն, զի մի ամբողջ աշխարհ ճակատագիրն կրնայ կախուած ունենալ անոնցմէ։ Վիրաբոյժն կարծոյն կը գործէ մի ակնթարթի մէջ, այլ կրնայ պատճառել կեանք կամ մահ։ Դիւանագիտութեան մէջ, նպատակն է տիրապետութիւն։ արդարութիւնն լոկ յայնժամ կը յիշուի երբ կարենայ ծառայել իբր միջոց։ Հէգօրի իրաւունքն է հզորագոյն իրաւունքն։ բրուսիական դպրոցն, գէթ անկեղծ և տրամաբան, կը խոստովանի զայն հրապարակաւ։ Վա՛յ տկարին։

22 ՅՈՒՆԻՍ

Տեսնելէ յառաջ գահաժառանգ իշխանի պալատական մարդախտն, կոմս Էոյլէնպուրգ, գիտենք Վեհաժողովի սենեակն մի պատի մէջ ուր Թէ՞սրդ ֆէ Պէռռ, որ կը վախէ խուժանէն, կրնայ հանիլ իւր ապարանի պարտէզն։ Սենեակն, ասուհետեւ պատմական, ունի փայլուն տախտակամած, ընդարձակ գորգ, կանաչ չուխայով ծածկուած պատուհաններ գրասեղան, գեղեցիկ թիկնաթոռներ, հնգատեղն աշտանակներ որը կը ցցուին պատերէն, հոյակապ ջահ որ կը կախուի ձեղունէն և յաղթ վարագոյրներ. թուղթեր, կաղամարներ, գրիչներ, գիրքեր եւ աշխարհացոյցներ սփռուած են գրասեղանին վրայ։ ժողովուրդն խռնուած է պալատին առջեւ, գիտելու համար լիազօրներն որը կ'երթան նստի։ առանը կը հանին կառքով, անգլիական նախարարապետն զատ, որ կը քայլէ, իւր քարտուղար-խորհրդականի բազուկին վրայ յեցած։ Ռուսաստանի առաջին պատուիրակն կը հանի պատգարակով. անտարբեր խուժանն կ'ոգեւորուի խկոյն և կ'ողջունէ զայն համակիր ցոյցերով։ գլխարկներն կը խոնարհին, և այս քաղաքն մէջ միակ ժողովրդական լիազօրն կը չարժէ գլուխն դէպ ա՛ղ և ձախ, վառելով իւր մշանջենաւոր ժպիտ։

23 ՅՈՒՆԻՍ

Արքունի հրապարակն պճնուած է ցաղթութեան կոթողովն, որը կոչուած է անմահացուցեալ 1870ի նախճիրներն։ չքեղ սիւն, որը կատարն կ'ամառնայ մի թեւաւոր կոյս, որ աջովն կը կարկառէ պսակ և ձախովն նիզակ։ Ֆռանսացին կը ձգէ անոր վրայ մի տխուր ակնարկ և կ'անցնի արագ մինչ Գերմանն կը փքանայ ցուցնելով զայն իւր կնոջ և զաւակի։ Կառավարութիւնն, ահաբեկելու համար յեղափոխիչներն կամ յայտնելու համար համախմբ Եւրոպայի իւր զինուորական զօրութիւն, ամեն առաւօտ կը զարթեցուցնէ քաղաքն փողերով և թմբուկներով, որոց կը հետեւին մի քանի վաշտեր, գրեթէ ռուս համազգեստով. ասոնք կը պատանին կայսերական պահպանին, որ կը պարունակէ, առանց բացառութեան, բարձրահասակ, խարտեաշ, կորովի եւ բարեդէմ երիտասարդներ։ Եղական երկիր, որ կը միացունէ քաղաքակրթութեան երկու հակընդդէմ երեւոյթներն, բիրտ ոյժ և մտաւոր զարգացում, արիւն և միտք։ Ժառանգականութիւնն կը ներդործէ հզօրապէս։ Վանդալն չ'է եղած անհետ, այլ գիտուն Վանդալն յաջորդած է ռազմ Վանդալին։

24 ՅՈՒՆԻՍ

Տեսնելէ յետոյ Հէսի Ալէկզանտր իշխանն, խրոխտ սպայ ոսկեճամուկ համագգեստով, և Ռուսաստանի առաջին լիազօրի խորհրդականն, պարօն Ժօմինի, լուռ և չէկ, երթանք քաղաքի դըլխաւոր շիրմատունն, դրախտի պէս գեղեցիկ, սեղ դամբաններով պճնուած, ուր մեր երկու արքեպիսկոպոսներ կ'օրհնեն էշեան Նիկոլաս Շանչէանցի տապանն, դժբախտ երիտասարդի լուսանկարովն զարդարուած. անմխիթար մայրն կը փարի ցուրտ քարին, ուր կը հեղու աչքերէն սիրտն որ կը սպառի կաթիլ առ կաթիլ։ Դերեզմնատունէն անցնինք կայսերական պալատն, ուր սպիտակափառ վեհապետն կը տանջուի իւր արենահոս վերքերէ։ Ելնենք ներքին սանդուղքն վեր և դիտենք արձանն մի հրեշտակի որ բրուսիական արծուին կ'ընծայէ ոսկի թասով ջուր։ Ներկայանանք Աուկուստա կայսրուհոյն, ադնիւ և բարեպաշտ եւ դեռ բարեդէմ, ում մի տոհմիկ նաժիշտ կ'ընկերանայ պատկառօտ։ անջատուինք արարողապետն, կոմս Նէսելրօտ, և կայսերական թիկնապահներն, կոմս Լէհնտորֆ և կոմս Արնիմ, վիթխարի սպայեր, շլացուցիչ համազգեստներով։ Զը մոռնանք գիտել ֆըռանսական դեսպանատունի երեկոյթին մէջ, երեք նոր դէմքեր. Պ. Տը Մառէլ «Ժուռնալ դէ Տէպա»ի թղթակիցներէն մին, զօրավար Արտա, Անգլիայի արքունի երկրայտի, և կոմս Տը Քէռադռի, հանրածանօթ։

25 ՅՈՒՆԻՍ

